26
ՕԳՈՍՏՈՍԻ
2022

Luys Լույս®

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԸ

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Պատմականորեն հայ-ամերիկյան հարաբերությունների որոշ փուլերում նկատելի են եղել հարաբերությունների մակարդակի բարձրացում, շփումների ինտենսիվացում: Դա նաև նկատելի է վերջին շրջանում, մասնավորապես՝ հայ-ամերիկյան բարձր մակարդակի շփումների ակտիվության տեսքով: Սա պայմանավորված է ոչ թե ակտիվ դիվանագիտական աշխատանքով և հարաբերությունների թարմացված օրակարգով, այլ տարածաշրջանում ԱՄՆ հետաքրքրություններով և Հարավային Կովկասում ձևավորված իրողություններով, մասնավորապես՝ Արցախյան երկրորդ պատերազմից հետո:

Հայ-ամերիկյան հարաբերությունների հաստատումից ի վեր շփումների ակտիվացում եղել է հենց այն ժամանակ, երբ առկա է եղել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություն կամ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկար: Սրանք տարածաշրջանում ԱՄՆ առաջնահերթություններն են, որոնց միջոցով ԱՄՆ-ն տեսնում է տարածաշրջանում Ռուսաստանի դերի նվազման կամ ընդհանրապես դուրսմղման հնարավորություն: Նմանատիպ քաղաքականություն, ընդհանուր առմամբ, վարել են ԱՄՆ բոլոր վարչակազմերը՝ սկսած Բուշի վարչակազմից, «Սառը պատերազմի» ավարտից և ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո:

Պայմանավորված տարածաշրջանում ԱՄՆ վերոհիշյալ հետաքրքրություններով՝ հարաբերությունների ակտիվացում և բարձր մակարդակի հանդիպումներ եղել են նաև նախկինում: Հայ-ամերիկյան հարաբերությունների ակտիվացումը 1990-ականների կեսերին պայմանավորված էր ՀՀ առաջին նախագահը Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական հայացքներով: Վերջինս հավատացած էր, որ Հայաստանի անվտանգության և տնտեսական զարգացման հիմնական երաշխիքներից մեկը անմիջական հարևանների հետ լավ

հարաբերություններ ունենալն է: Բնականաբար, դա վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանն ու Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը: Սկսած անկախության առաջին օրերից՝ Տեր-Պետրոսյանի քաղաքական թիմը կարևոր էր համարում Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատումը առանց նախապայմանների և առավել ծանր քաղաքական զիջումների:[1] Այս հարցերի շուրջ Տեր-Պետրոսյանի մոտեցումները վայելում էին ԱՄՆ-ի այն ժամանակվա նախագահ Քլինթոնի վարչակազմի աջակցությունը, թերևս դրանք էլ պատճառ էին եղել բարձր մակարդակի շփումների համար, ինչի բարձրակետը դարձավ 1994թ. պաշտոնական այցը ԱՄՆ, որի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպեց ամերիկյան քաղաքական վերնախավին Բիլ Քլինթոնի գլխավորությամբ: Այնուամենայնիվ, Լևոն Տեր-Պետրոսյանի հայացքները չէին կիսում հայաստանյան էլիտայի մի հատվածը, ինչպես նաև սփյուռքն ու Վաշինգտոնում գործող հայկական կազմակերպությունները: Նաև դա դարձավ պատճառներից մեկը, որ նախագահ Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ հրաժարական ներկայացնել և պաշտոնաթող լինել:

Հայ-ամերիկյան հարաբերությունների ակտիվացման երկրորդ փուլը, ի տարբերություն առաջինի, պայմանավորված էր ոչ թե ղեկավարի քաղաքական հայացքներով, այլ կոնկրետ քաղաքական գործընթացով: Այն սկիզբ առավ 2001թ.՝ ԱՄՆ նախաձեռնությամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո և ապրիլի 3-ին տեղի ունեցան Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունները: Բանակցություններին, որպես միջնորդ, ներկա էր ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը, ինչն ընդգծում էր բանակցությունների կարևորությունը Բուշի վարչակազմի համար: Բացի այդ, ապրիլի 9-ին տեղի ունեցավ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հանդիպումը Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հետ:[2] Այնուամենայնիվ, այս գործընթացը նույնպես տապալվեց, քանի որ ադրբեջանական կողմը պատրաստակամ չէր իրագործել ձեռք բերված պայմանավորվածությունները:

Հայ-ամերիկյան հարաբերությունների ակտիվացման երրորդ շրջանը սկիզբ առավ 2008թ.: Այս ակտիվացումը նույնպես պայմանավորված էր ԱՄՆ տարածաշրջանային շահերով, հատկապես՝ Թուրքիայի՝ Հարավային Կովկասում դիրքերի ամրապնդման հեռանկարով, այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ: Այդ ժամանակ մեկնարկած «ֆուտբոլային դիվանագիտությանը» ԱՄՆ-ն մեծապես աջակցում էր: Հենց այս գործընթացի

[1] The Dilemma of Armenian-Turkish Relations, https://evnreport.com/politics/the-dilemma-of-armenian-turkish-relations/, (09.08.2022).
[2] Key West: Ups and Downs, https://mediamax.am/en/news/keywest/541/, (09.10.2022).

հետևանք էր, որ բարձր մակարդակի հանդիպումներ տեղի ունեցան նախագահ Սերժ Սարգսյանի և Բարաք Օբամայի միջև, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը երկու անգամ այց կատարեց Հայաստան՝ 2010 և 2012թթ.՝ դառնալով ԱՄՆ երկրորդ և դեռևս վերջին պետքարտուղարը, որը երբևէ այցելել է Հայաստան: ԱՄՆ ակտիվ ներգրավմամբ Հայաստանի և Թուրքիայի միջև սկսված բանակցությունների արդյունքում 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվեցին հայ-թուրքական արձանագրությունները, որոնցով նախատեսվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել և բացել սահմանները: Այնուամենայնիվ, արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան առաջ քաշեց նախապայմաններ և ստորագրված արձանագրությունները չվավերացվեցին: Արդյունքում, ՀՀ նախագահի 2018թ. մարտի 1-ի հրամանագրով դադարեցվեց հայ-թուրքական արձանագրությունների կնքման գործընթացը:[3]

Ներկայումս հայ-ամերիկյան բարձր մակարդակի շփումների առկայությունն ու ակտիվությունը, հատկապես վերջին ամիսների ընթացքում պետք է դիտարկել վերոհիշյալ տրամաբանության շրջանակներում: Բայդենի վարչակազմն իր տարածաշրջանային առաջնահերթություններին համապատասխան՝ առավել ակտիվ քաղաքականություն է վարում՝ պայմանավորված հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացներով և հեռանկարներով, իսկ նպատակը շարունակում է մնալ նույնը, ինչ երեսուն տարի առաջ, այսինքն՝ տարածաշրջանում Ռուսաստանի դերի և նշանակության կրճատումը:

Տարածաշրջանային նման առաջնահերթությունները հիմնված են Միացյալ Նահանգների այն համոզմունքի և ռազմավարության վրա, որ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանների բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման արդյունքում Հայաստանում կստեղծվի Ռուսաստանից ավելի անկախ՝ ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ տնտեսական միջավայր: Սա իր հերթին նշանակում է ԱՄՆ դաշնակից Թուրքիայի ազդեցության ընդլայնում Հարավային Կովկասում՝ Մոսկվայի ազդեցության հաշվին, ինչը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել Հայաստանից ռուսական ռազմակայանի դուրսբերմանը, քանի որ նման իրավիճակում փորձ է արվելու հիմնավորել, որ Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող վտանգ չկա, ուստի Հայաստանում ռուսական ռազմական ներկայության կարիք պարզապես չկա:

[3] ԱՄՆ քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում, Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն, «Դրոշակ» ամսաթերթ, թիվ 2, 2022, էջ 15-18:

Պատահական չէր, որ ըստ «Բլումբերգի» տեղեկատվության, հենց Ջո Բայդենն էր Հռոմում կայացած հանդիպման ժամանակ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին հորդորել բացել Հայաստանի հետ սահմանը:[4] Դա տեղի էր ունեցել 2021թ. հոկտեմբերի 31-ին կայացած հանդիպման ժամանակ՝ G20-ի գագաթնաժողովի շրջանակներում: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Բայդենն ու Էրդողանը հանդիպման ընթացքում քննարկել էին նաև Հարավային Կովկասում դիվանագիտական ջանքերը:[5]

Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական ընթացող գործընթացներին զուգահեռ՝ հայ-ամերիկյան շփումներն ակտիվացել են հատկապես մեկ տարվա ընթացքում, ինչը կարելի է համարել հայ-ամերիկյան հարաբերությունների ակտիվացման չորրորդ փուլ: Դա պայմանավորված է վարչապետ Նիկոլ Փաշինյանի քաղաքական հայացքներով, որը պատրաստակամորեն ներգրավվել է հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացներում՝ փորձելով Հայաստանի և Արցախի հաշվին, միակողմանիորեն բավարարել բոլոր նախապայմանները: Շփումների աճը նկատվեց 2020թ. Արցախյան պատերազմից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը ակտիվորեն ներգրավվեց Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացներում: Սակայն այս շփումների հաճախության աճը հատկապես նկատելի դարձավ 2022թ. սկզբին:

Նախ Վաշինգտոն այցելեցին ԱԽ քարտուղարը, ԱԺ նախարարը, ԱԳ նախարարը, Հայաստան այցելեց ԱՄՆ կենտրոնական հետախուզական գործակալության ղեկավարը և այլն:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջիներկու ամսվա ընթացքում երկու հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Առաջինը՝ հուլիսի 25-ին, որի ընթացքում քննարկվել է «Ադրբեջանի և Հայաստանի պատմական հնարավորությունը՝ հասնելու տարածաշրջանում խաղաղության»: Պետքարտուղարը նաև ողջունել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված կոնկրետ քայլերը:[6] Հեռախոսազանգն իրականացնելու պահին Հայաստանի և

[4] Turkey Moves to Normalize Armenia Ties in Bid to Please Biden, Bloomberg, December 13, 2021, https://www.bloomberg.com/news/articles/2021-12-13/turkey-moves-to-normalize-armenia-ties-in-bid-to-please-biden, (10.08.2022).

[5] President Joseph R. Biden, Jr. met today with President Recep Tayyip Erdogan of Turkey on the margins of the G20 Summit, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/10/31/readout-of-president-bidens-meeting-with-president-recep-tayyip-erdogan-of-turkey/, (10.08.2022).

[6] Secretary Blinken's Call with Armenian Prime Minister Pashinyan, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-armenian-prime-minister-pashinyan-5/, (10.08.2022).

Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչներն արդեն չորս հանդիպում էին անցկացրել:[7]

Բլինքենի և Փաշինյանի միջև երկրորդ հեռախոսազրույցը տեղի է ունեցել օգոստոսի 5-ին՝ պայմանավորված օգոստոսին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում սանձազերծված ագրեսիայով:[8]

Իսկ նույն ժամանակահատվածի համար ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն իր հերթին ունեցել է երկու հեռախոսազրույց և մեկ հանդիպում ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդի հետ՝ հուլիսի 17-ին[9] և օգոստոսի 1-ին,[10] իսկ հանդիպումը տեղի էր ունեցել հունիսի 18-ին Դոնֆրիդի տարածաշրջանային այցի ժամանակ:[11] Վերջինիս ընթացքում Դոնֆրիդը, ըստ պաշտոնական տեղեկատվության, «ընդգծել է ԱՄՆ պատրաստակամությունը՝ օգնելու կառուցել տևական խաղաղություն Հարավային Կովկասում... և ԱՄՆ աջակցությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական ջանքերին»:[12]

Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական գործակալության ղեկավար Ուիլյամ Բըրնսի այցին Հայաստան, ապա վերջինս հանդիպել է ՀՀ վարչապետի[13] և ԱԽ քարտուղարի հետ, որի ընթացքում վերջիններս քննարկել են Հայաստան-Ադրբեջան և Հայաստան-Թուրքիա բանակցային գործընթացները:[14] Ի դեպ, ԱՄՆ ԿՀԳ ղեկավար Բըրնսը Հայաստանում հանդիպել է ոչ թե իր անմիջական գործընկեր ԱԱԾ ղեկավարի, այլ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ: Դա

---

[7] Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների չորրորդ հանդիպումը, https://www.mfa.am/hy/press-releases/2022/07/01/Armenia_Turkey_4th/11527, (11.08.2022).

[8] Secretary Blinken's Call with Armenian Prime Minister Pashinyan, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-armenian-prime-minister-pashinyan-6/, (11.08.2022).

[9] ՀՀ ԱԳ նախարարի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի հետ, https://www.mfa.am/hy/press-releases/2022/07/17/fm_mirzoyan_donfrid/11548, (11.08.2022).

[10] ՀՀ ԱԳ նախարարի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի հետ, https://www.mfa.am/hy/press-releases/2022/08/01/fm_mirzoyan_donfried/11568, (12.08.2022).

[11] ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի հետ, https://www.mfa.am/hy/press-releases/2022/06/18/fm_mirzoyan_karen_donfried/11507, ()

[12] Assistant Secretary Donfried's Travel to Azerbaijan, Georgia, and Armenia, https://www.state.gov/assistant-secretary-donfrieds-travel-to-azerbaijan-georgia-and-armenia/, (12.08.2022).

[13] Վարչապետն ընդունել է ԱՄՆ ԿՀՎ ղեկավար Ուիլյամ Բըրնսին, https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/07/15/Nikol-Pashinyan-meeting./, (12.08.2022).

[14] ԱԽ քարտուղարը հանդիպել է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Ուիլյամ Բըրնսի հետ, https://www.seco.am/information/press_releases/540?lang=hy, (15.08.2022).

պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման մի ուղղությունը սպասարկում է հենց Գրիգորյանը՝ Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիևի հետ, որոնց միջև արդեն իսկ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ:[15]

Ուստի, ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում մնում է անփոփոխ՝ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների ամբողջական կարգավորում, ինչի հաշվին Հայաստանը կձևավորի Մոսկվայից առավել անկախ միջավայր :

Վերոշարադրյալից բխում է, որ հայ-ամերիկյան հարաբերությունները ակտիվանում են այն ժամանակահատվածում, երբ հնարավորության պատուհան է բացվում տարածաշրջանային կոնֆլիկտների կարգավորման հարցում, ինչը նշանակում է Հարավային Կովկասում ռուսական ազդեցության նվազում, թեկուզ թուրքական ազդեցության հաշվին: Այսինքն՝ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունները ԱՄՆ-ի համար պարզապես երկու հարևան երկրների հարաբերությունների կարգավորում չեն նշանակում, այլ համապատասխանում են տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին: Մեծ հաշվով Միացյալ Նահանգների համար միևնույն է՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը կկարգավորվի ազգերի ինքնորոշմա՞ն, թե՞ տարածքային ամբողջականության շրջանակներում: Նույն կերպ, ԱՄՆ-ի համար միևնույն է, թե հայ-թուրքական հարաբերություններում ով ինչ զիջումների կգնա: Կարևորը խնդիրների շուտափույթ կարգավորման հեռանկարն է:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ հայ-ամերիկյան շփումների ակտիվացումը չի նշանակում Հայաստանի արտաքին քաղաքականության էֆեկտիվություն կամ դիվանագիտական լուրջ ջանքերի ներդրում՝ ի տարբերություն նախորդ փուլերի, այլ պայմանավորված է Հայաստանի պատրաստակամությամբ՝ ամեն գնով կարգավորելու հարևանների հետ հարաբերությունները, այդ թվում՝ միակողմանի և գլոբալ զիջումների հաշվին:

Ըստ այդմ, առաջիկայում հայ-ամերիկյան բարձր մակարդակի շփումները կշարունակվեն: Չի բացառվում, որ 2022 թվականի ընթացքում վերջապես հանդիպեն Հայաստանի և ԱՄՆ-ի ղեկավարները: Իսկ առաջիկայում Հայաստան կայցելեն ԱՄՆ-

[15] Armenia/Azerbaijan: EU hosts high-level meeting in Brussels, https://www.eeas.europa.eu/eeas/armeniaazerbaijan-eu-hosts-high-level-meeting-brussels_en, (15.08.2022). Armen Grigoryan-Hikmet- Hajiyev-Toivo Klaar 2nd meeting https://twitter.com/ToivoKlaar/status/1521144996707147776?s=19, (15.08.2022).

ի տարբեր բարձրաստիճան գործիչներ, այդ թվում՝ Կոնգրեսի և վարչակազմի բարձրաստիճան ղեկավարներ:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*